Հավելված N 1՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի
մայիսի 05-ի N 56-Ա որոշման

(Կազմված է 2017թվականի մայիսի 5 -ին,
բաղկացած է 6 (վեց) թերթից)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի
N 56-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ք. Գյումրի, 2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկը (այսուհետ՝ հիմնարկ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հիմնարկ է:
2. Հիմնարկի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքն է (այսուհետ՝ համայնք)՝ ի դեմս համայնքի ավագանու (այսուհետ՝ հիմնադիր):
3. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ:
4. Հիմնարկի անվանումն է՝
   1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ,
   2) հայերեն կրճատ՝ «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ:
5. Հիմնարկն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք և անհատականացման այլ միջոցներ:
6. Հիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
7. Հիմնարկի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, փոստային դասիչ՝ 3104:

II. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Հիմնարկի գործունեության հիմնական նպատակն է՝ համայնքի վարչական տարածքում որակյալ կոմունալ ծառայությունների մատուցման ապահովումը: Այդ նպատակով հիմնարկը կազմակերպում և իրականացնում է հետևյալ գործառույթները.
   1) համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ոռոգման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործում և կառավարում,
   2) բարեկարգում ու կանաչապատում,
   3) աղբահանության կազմակերպում,
   4) հանգստի վայրերի խնամք և պահպանություն,
   5) ծառերի և թփերի էտ ու համայնքի սանիտարական մաքրում,

6) գետերի հուների մաքրում,
7) համայնքային ենթակայության ճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցում, վերանորոգում և բարեկարգում,
8) համայնքային ենթակայության կամուրջների և սողանքավտանգ գոտիների հենապատերի կառուցում, նորոգում և անվտանգ շահագործում,
9) անձրևաջրատար համակարգերի կառուցում, նորոգում և անվտանգ շահագործում,
10) համայնքի սեփականություն համարվող բնակելի տների, բնակարանների, հանրակացարանների և ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանում, շահագործում, դրանց հիմնական և ընթացիկ նորոգում,
11) այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից,
12) քաղաքի տարածքում գտնվող շատրվանների, հուշարձանների, ցայտաղբյուրների սպասարկում և շահագործում, քաղաքի հուշահամալիրների տարածքների բարեկարգում, շահագործում և պահպանում,
13) համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի և այլ տեխնիկական միջոցների, ինժեներական այլ կառույցների պահպանում ու շահագործում, գծանշումներ, նշանների, լուսաֆորների տեղադրում, սպասարկում և շահագործում,
14) իր գործառույթների շրջանակներում համագործակցություն համայնքային ենթակայության «Հավերժ հիշատակ», «Բարեկարգ քաղաք» և «ՏԻՄ – ՇԻՆ» ՓԲԸ–ների , «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» ՀՈԱԿ-ի, արտակարգ իրավիճակներում՝ համապատասխան կազմակերպությունների և քաղաքի անասնաբուժական տեսչության հետ:

III. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Հիմնարկի ընդհանուր կառավարումն իրականացնում են համայնքի ղեկավարը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հիմնարկի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
10. Հիմնարկի հիմնադիրն ունի հիմնարկի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցին վերջնական լուծում տալու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
11. Հիմնարկի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
    1) հիմնարկի հիմնադրումը,

2) հիմնարկի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
3) համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հիմնարկի տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալը,
4) հիմնարկին ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
5) հիմնարկի վերակազմակերպումը և լուծարումը,
6) հիմնարկի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

12. Համայնքի ղեկավարը՝
1) նշանակում է հիմնարկի տնօրեն՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,
2) վերահսկողություն է իրականացնում հիմնարկի գործունեության նկատմամբ,
3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հիմնարկի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
4) լսում է հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
5) վերահսկողություն է իրականացնում հիմնարկին ամրացված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,
6) Համայնքի ավագանու որոշմամբ՝ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարմանը կամ վարձակալության հանձնմանը,
7) հաստատում է հիմնարկի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, իրականացնում է հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

13. Տնօրենն իրականացնում է հիմնարկի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հիմնարկի գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

14. Տնօրենը՝
1) սահմանում է հիմնարկի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
4) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
5) վերահսկողություն է իրականացնում հիմնարկի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
6) ապահովում է հիմնարկի աշխատանքային ներքին կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
7) կազմում է հիմնարկի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը,
8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հիմնարկի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

15. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հիմնարկի սեփականությունը ձևավորվում է հիմնարկի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի որոշմամբ նրան ամրացվող, ինչպես նաև հիմնարկի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
17. Հիմնարկն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
18. Հիմնարկին ամրացված գույքի պահպանման հոգսը կրում է հիմնարկը:
19. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հիմնարկին ամրացված գույքը:
20. Հիմնարկն առանց հիմնադրի որոշման իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հիմնարկն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության՝ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ

տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հիմնարկի ստացած եկամուտները հիմնարկի սեփականությունն են: Հիմնարկին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հիմնարկի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

21. Հիմնարկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
22. Հիմնարկին ֆինանսավորում է հիմնադիրը: Հիմնարկի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
23. Հիմնարկի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.
    1) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները,
    2) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
    3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հիմնարկի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
24. Հիմնարկի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

25. Հիմնարկը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գյումրու համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ **Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ**